



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի *Տարբերակ 26-ի N 57 - Ա*

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի ԹԻՎ 1/1 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 29-Ի ԹԻՎ 16/2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 13-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 3-րդ մասով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի ապրիլի 9-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատում պետական ծառայության պաշտոնների հաստիքացուցակը և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 1/1 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

- 1) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 32.2. կետով («32.2. Մկրտչյան Դավիթ Գլխավոր մասնագետ 46-32.2-Մ2-8»);
- 2) ուժը կորցրած ճանաչել որոշման հավելվածի 106.1. կետը («106.1. Մկրտչյան Դավիթ Գլխավոր մասնագետ 46-32.10-Մ2-6»):

2. Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 16/2 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետը «Հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 46-32.2-Մ2-7)» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«Հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 46-32.2-Մ2-8)»,

2) որոշման 1-ին կետի պալատի «Հաշվեքննիչ տասներորդ վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 46-32.10-Մ2-5)» բառերից հետո հանել «Հաշվեքննիչ պալատի տասներորդ վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 46-32.10-Մ2-6)» բառերը,

3) որոշումը լրացնել թիվ 32.2 հավելվածով, համաձայն հավելվածի,

4) ուժը կորցրած ճանաչել որոշման թիվ 72.1 հավելվածը:

3. Հաշվեքննիչ պալատի մեթոդաբանության, վերլուծության և միջազգային կապերի վարչության խորհրդականի պաշտոնը փոխադրել վեցերորդ վարչություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

 Լ. ՅՈՒՅԱՆ